

Ս՝ Մուրադյան

### ՀԱՅ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Սովետական ժողովուրդների կուլտուրական կապերի ուսումնասիրությունը հանդիսանում է սովետական արվեստագիտության առաջնահերթ խնդիրներից մեկը:

Ներկա ակնարկում մեզ հետաքրքրող հարցն է՝ հայ-ուկրաինական երաժշտական կուլտուրայի կապերի որոշ կողմերը, որն ամենևին չի ուսումնասիրված և նոր է միայն հանդես բերվում: Ընտրելով այս թեման, մենք հավակնություն չունենք սպառիչ պատասխան տալ բոլոր այն հարցերին, որոնք կապված են հայ-ուկրաինական երա

ծագործական հարուստ փորձը վճռական նշանակություն ունեցավ ուկրաինական կլասիկ երաժշտության ձևավորման համար: Այդ գործում բացառիկ նշանակություն ունեցավ նաև մի կողմից՝ ուկրաինացի մեծագույն կորգար Տ. Գ. Շևչենկոյի անմահ ստեղծագործությունը, իսկ մյուս կողմից՝ բացառիկ հարստությամբ օժտված ուկրաինական ժողովրդական երաժշտությունը: Այս շրջանում հանդես եկած ուկրաինական կոմպոզիտորները հիմք դրին ուկրաինական ազգային երաժշտական դպրոցին, որը վերջնականապես ձևավորվեց Շնորհիվ Մ. Վ. Լիսենկոյի ստեղծագործությանը:

Ռուսական և ուկրաինական կլասիկ երաժշտության բուռն զարգացումը կարևոր նշանակություն ունեցավ ինչպես հայ ժողովրդի, նույնպես և Ռուսաստանի տերիտորիայի վրա բնակվող այլ ժողովուրդների համար:

XIX

կենտրոնատեղեր, միաժամանակ հանդիսանում էին կուլտուրական խոշոր օջախներ, որտեղ պահպանվում և զարգացվում էր հայկական բազմադարյա կուլտուրան։ Կարելի է հաստատ համոզմունքով պնդել, որ, անկասկած, գոյություն են ունեցել կուլտուրական և մասնավորապես երաժշտական կապեր դարերով իրար կողք-կողքի ապրող հայերի և ուկրաինացիների միջև։ Դրեւ ապացույց կարող է ծառայել հետևյալ հետաքրքրական փաստը. 1873 թվականին Ակկերմանում, շփվելով տեղական հայերի հետ, ուկրաինական դրամատուրգ և հայտնի դերասան Մ. Լ. Կրապիվնիցկին իրագործեց հայկական եկեղեցական երգասացությունների խմբերգային մշակումը և կազմակերպելով երգեցիկ խումբ սիրողներից՝ կատարեց այն տեղի հայկական եկեղեցում։ Եւ փաստորեն հայկական եկեղեցական երգասացությունների խմբերգային մշակման առաջին փորձն էր, քանի որ Վեն





























